«HOUSAPER»
Armenian Daily
Since 1913 - Cairo
Published By
«Housaper» Cultural Assoc.
Registered At
Ministry Of Social Affairs
Under No. 67/636

ՅՈՒՍԱԲԵՐ
ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադրուած՝ 1913-ին – Հիմնադիր՝ Արմենակ Մէօթէմէտեան

هـوسَــــابيِر
جريدة يومية ارمنية تأسست عام ١٩١٣ بالقاهرة
صاحب الامتياز جمعية ثقافة الارمنية "هوسابير"
المسجلة لدي وزارة الشئون الاجتماعية
برقم ٦٣٦ / ٦٧

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 9 ՅՈՒՆՈՒԱՐ 2019, 104-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 164
الاربعاء ٩ يناير ٢٠١٩ - السنة ١٠٤ - العدد رقم ١٦٤

## Շ. Քոչարեանի Մեկնաբանութիւնը՝ Ղազախստանի Մէջ Հայերու Եւ Ատրպէյճանցիներու Ծեծկռտուքին



ՀՀ արտաքին փոխնախարար Շաւարշ Քոչարեան մեկնաբանութիւն տարածած է Ղազախստանի Քարականտա քաղաքը հայերու եւ ատրպէյճանցիներու միջեւ մահուան ելքով միջադէպին մասին: Նախարար տեղակալն ընդգծած է, որ կենցաղային բնոյթ ունի անիկա եւ յորդորած է խուսափիլ ազգամիջեան նրբերանգ տալէ:

Ստորեւ՝ Շաւարշ Քոչարեանի մեկնաբանութիւնն ամբողջութեամբ.

«Բոլոր նրանք ովքեր ի սկզբանէ առիթ են ունեցել հետեւելու իրավիճակին, տեղեակ են, որ դեռեւս Յունուարի 3-ին Ղազախստանում Հայաստանի դեսպանութիւնը հանդէս է եկել համապատասխան յայտարարութեամբ: Հասկանում ենք, որ երբ արուել է այդ յայտարարութիւնը, Հայաստանում տօնական օր էր, եւ հաւանաբար ոչ բոլորն են դա նկատել: Բնական է, որ արուած յայտարարութիւնը մեր կատարած աշխատանքի միայն հրապարակային կողմն է արտայայտում:

Դեսպանութեան տարածած այդ յայտարարութեան մէջ մասնաւորապէս յոյս է յայտնւում, որ այս իրավիճակի վերաբերեալ անդրադարձ կատարելիս հիմք կ՚ընդունուեն պաշտօնական աղբիւրները, եւ սոցիալական ցանցերում չի տարածուի չստուգուած տեղեկատուութիւն, ինչը կարող է դառնալ հանրային կարծիքը մանիպուլիացիայի ենթարկելու աղբիւր՝ այս կենցաղային հողի վրայ տեղի ունեցած ողբերգութեանը փորձելով տալ ազգամիջեան նրբերանգ:

Այս յորդորը շարունակում է արդիական մնալ: Այնուամենայնիւ, Հայաստանում տուրք են տուել որոշակի յայտարարութիւններին, որոնք արուել են առանց հաշուի առնելու թէ՛ մեր երկրի պաշտօնական դիրքորոշումը, որը մասնաւորապէս արտայայտուել է Հայաստանի դեսպանութեան յայտարարութեան մէջ, թէ՛ հարցի գերզգայուն բնոյթը Քարականտայում բնակուող մեր հայրենակիցների համար:

ՀՀ ԱԳՆ-ը եւ Ղազախստանում ՀՀ դեսպանութիւնն առաջին իսկ պահից մշտական կապի մէջ են գտնւում Ղազախստանի իշխանութիւնների, պատկան մարմինների հետ՝ որոշում կայացնողների մակարդակով: Այդ անմիջական շփումները Հայաստանի եւ Ղազախստանի գերատեսչութիւնների միջեւ շարունակւում են: Երկուստէք որդեգրուել է նոյն դիրքորոշումը, որ սա կենցաղային քրէական երեւոյթ է, որին ազգամիջեան նրբերանգ տալու որեւէ փորձ պէտք է խստօրէն բացառել: Ղազախական կողմից տրուել են բոլոր հաւաստիացումները, որ ձեռնարկուելու են համապատասխան միջոցներ՝ իրավիճակի վերահսկման եւ նմանօրինակ պոռթկումների վերացման ուղղութեամբ: Եւ այդ միջոցները ձեռնարկւում են: Դեսպանութիւնը նաեւ շուրջօրեայ կապի մէջ է համայնքային կառոյցների ղեկավարների հետ:

Գիտակցելով ստեղծուած իրավիճակի հետ կապուած մտահոգութիւնները՝ կոչ ենք անում խորհրդատուներին, մասնագէտներին առաւել մեծ պատասխանատուութիւն ցուցաբերել այս շատ զգայուն հարցի շուրջ իրենց յայտարարութիւններում եւ չտրուել պոպուլիզմի եւ սադրանքների գայթակղութեանը. սա գերզգայուն հարց է, որին ազգամիջեան երանգ տալու բոլոր փորձերը դատապարտելի եւ անհանդուրժելի են»: ■

## ԵՈՒՆԵՍՔՕ Հայկական Պորտասարն Ընդգրկած Է Համաշխարհային Ժառանգութեան Ցանկին Վրայ



«Ակունք»՝ վկայակոչելով «Եուրօ Նիուզ»ը կը հաղորդէ, որ ԵՈՒՆԵՍՔՕ որոշած է Թուրքիոյ արդի սահմաններուն մէջ գտնուող Հայկական Պորտասարը (Թրքական անուանումը՝ Կէօպեքլիթեփէ) ընդգրկել Համաշխարհային ժառանգութեան մշտական ցանկին վրայ:

Աղբիւրին համաձայն՝ սոյն որոշումը Համաշխարհային ժառանգութեան կոմիտէն ընդունած է 3 Յուլիս 2018-ին, Պահրէյնի 42-րդ նիստին ընթացքին:

Յիշեցնենք, որ վեց տարի առաջ Պորտասար ներառուած էր ԵՈՒՆԵՍՔՕ -ի Համաշխարհային ժառանգութեան ժամանակաւոր ցանկին վրայ:

Պորտասարի հնավայրը կը համարուի աշխարհի ամենահին տաճարին հայրենիքը, որ ըստ մասնագէտներու՝ շուրջ 12,000 տարուան հնութիւն ունի:

1995-էն ի վեր գերմանացի եւ թուրք հնագէտներ պեղումներ կը կատարեն այդտեղ: Մասնագէտները կ՚ենթադրեն, որ առայժմ յայտնաբերուած է սոյն հնավայրին 5 առ հարիւրը միայն: ■

## Արման Թաթոյեան Քարականտայի Միջադէպը Քննած Է Ղազախ Պաշտօնակցին Հետ



Հայաստանի մարդկային իրաւանց պաշտպան (ՄԻՊ) Արման Թաթոյեան Ղազախստանի Քարականտա քաղաքը ստեղծուած իրավիճակին շուրջ հեռախօսազրոյց ունեցած է Ղազախստանի մարդկային իրաւանց յանձնակատար Ասքար Շաքիրովի հետ:

Հայաստանի ՄԻՊ-ի աշխատակազմէն յայտնած են, որ ղազախ պաշտօնակիցը անթոյլատրելի կը համարէ միջադէպին ազգամիջեան երանգ կամ բնոյթ տալը: Ան հաւաստած է, որ ազգութեամբ հայերու հանդէպ խտրական վերաբերմունքի մասին խօսք չի կրնար ըլլալ: Ասքար Շաքիրով ըսած է, որ հարցը կը գտնուի իր անմիջական ուշադրութեան ներքեւ:

Ամանորի գիշերը անսթափ վիճակի մէջ այր մարդոց խումբը ծեծկռտուք սարքած է ճաշարանի մը մօտ, որու հետեւանքով մէկ հոգի դանակահարուած է:

Հայաստանի ՄԻՊ-ի հետ հեռախօսազրոյցէն ետք ան հարցը դարձեալ քննած է իրաւապահներուն հետ եւ Արման Թաթոյեանին յայտնած, որ դէպքը միայն կենցաղային քրէաիրաւական բնոյթ ունի՝ յղում կատարելով իրաւապահ մարմիններու ինչպէս նոր, այնպէս ալ նախորդ հաղորդումներուն:

Արման Թաթոյեանի խնդրանքով Ասքար Շաքիրով պատրաստակամութիւն յայտնած է իրաւասութեան սահմաններուն մէջ մանրամասն քննութեան ենթարկել որեւէ բողոք կամ դիմում, որ կրնան ունենալ հայերը:

Հայաստանի մարդկային իրաւանց պաշտպանը ընդգծած է ղազախ գործընկերոջ հետ համագործակցութեան բարձր որակը, անոր արագ արձագանգը, աւելցնելով որ Ղազախստանի մեր հայրենակիցներուն առնչուող իրավիճակի շուրջ կը շարունակէ հաղորդակցութեան մէջ մնալ անոր հետ:

Ղազախական «ԲԱՍէ» հեռուստաալիքը, անդրադառնալով դէպքին, բացայայտած է, որ կասկածելիներու ինքնութիւնը Յունուարի 2-ին եւ օր մը ետք արմատապէս փոխուած է: Յատկապէս՝ Յունուարի 2-ին նշուած են ատրպէյճանցիներու անուն-ազգանուններ, մինչդեռ յաջորդ օրը ենթադրեալ յանցագործներու անուն-ազգանունները դարձած են հայկական:

Ղազախստանի Քարականտայի նահանգապետ Երլան Քոշանով ոստիկանութեան շէնքին մօտ հաւաքուած մօտ 200 ցուցարարներու յայտարարած է, որ Յունուարի մէկին «Հին Հռոմ» ճաշարանին մօտ տեղի ունեցած զանգուածային ծեծկռտուքի բոլոր մեղաւորները պիտի պատժուին:

Ինչպէս նշած է nur.kz կայքը, նահանգապետը նաեւ մանրամասնած է, որ դէպքի շուրջ հետաքննութեան անձամբ կը հետեւի Ղազախստանի գլխաւոր դատախազը:

Նահանգապետարանէն ընդգծած են, որ երկու խումբի միջեւ ծեծկռտուքը ազգամիջեան բնոյթ չէ կրած:

Քարականտայի իշխանութիւնները հանդիպած են ծեծկռտուքի հետեւանքով սպաննուածի հարազատներուն հետ՝ ներկայացնելով քննութեան ընթացքի որոշ մանրամասներ: Իշխանութիւնները խօսք տուած են, որ գործընթացը թափանցիկ եւ առարկայական կ՚ըլլայ:

Ընդհանուր առմամբ, յարուցուած է երկու քրէական գործ՝ «սպանութիւն» եւ «խուլիգանութիւն» յօդուածներով:

Յայտնի է, որ ծեծկռտուքին մասնակցած է ութ հոգի, որոնցմէ եօթն արդէն կալանուած է, իսկ միւսի նկատմամբ միջազգային հետախուզում յայտարարուած է:

Աւելի կանուխ Քարականտայի շրջանային դատարանը Սոխակ Մալխասեանի, Թորգոմ Մալխասեանի եւ Քայիր Նատիրպեկովի կալանքի տակ առած է:

«Ջիրենք կալանաւորած են երկու ամիսով: Ատկէ զատ, կասկածեալ Նարեկ Գուրուրեանի հանդէպ, որ թաքնուած է եւ կը հետախուզուի, նոյնպէս խափանման միջոց ընտրուած է կալանքը», ըսուած է դատարանի մամուլի հաղորդագրութեան մէջ: ■

## Թրքական Ընդդիմութիւնը Կը Միաւորուի ՏԻՄ Ընտրութիւններէն Առաջ



Թուրքիոյ ընդդիմութիւնը պատրաստուելով սպասուող ընտրութիւններուն կը միաւորուի. ընդդիմադիր Հանրապետական ժողովուրդի ու «Լաւ» կուսակցութիւնները համաձայնած են Մարտի 31-ին կայանալիք տեղական ինքնակառավարման ընտրութիւններուն ժամանակ համագործակցիլ՝ երկրի 20 նահանգէ ներս ներկայացնելով միասնական թեկնածուներ:

Թրքական «Ճումհուրիյէթ» թերթը գրած է, որ հանրապետականներու առաջնորդ Քեմալ Քըլըճտարօղլու եւ «Լաւ» կուսակցութեան հիմնադիր ու նախագահ Մերալ Աքշեներ պայմանաւորուած են երկու նահանգներու մէջ ալ աջակցել այլ ընդդիմադիր ուժի մը՝ «Երջանկութիւն» կուսակցութեան: Յայտնի է, որ Ատըիամանի մէջ ընդդիմադիր ուժերը միասին կը սատարեն «Երջանկութեան» թեկնածուին:

Աւելի կանուխ յայտնի դարձած էր, որ Թուրքիոյ նախկին վարչապետ Պինալի Եըլտըրըմ կը յաւակնի Պոլսոյ քաղաքապետի պաշտօնին՝ իբրեւ իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան թեկնածու: ■

## Փեսքով Հաստատած Է Փութինի Եւ Էրտողանի Յառաջիկայ Հանդիպումը

Ռուսիոյ նախագահ Վլ. Փութինի բանբեր Տմիթրի Փեսքով հաստատած է Փութինի և Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Էրտողանի հանդիպման մասին լուրը, հաղորդած է ԹԱՍՍ: «Առաջնորդները պայմանաւորուած են, որ հանդիպումը շուտով պիտի կայանայ, սակայն ամսաթիւը դեռ պարզ չէ», ըսած է Փեսքով:

Թրքական մամուլը նախապէս հաղորդած էին, որ Յունուարին պիտի կայանայ երկու երկիրներու նախագահներուն հանդիպումը, որուն ծիրին մէջ պիտի քննուին շարք մը հարցեր, որոնց հերթին՝ Սուրիոյ իրադրութիւնը եւ Ռուսիայէն C-400 հրթիռային համակարգեր գնելու Թուրքիոյ պայմանագիրը: ■

## «Ոչ Թէ Պեթոնէ, Այլ Պողպատէ Պատ». Թրամփ՝ Սահմանային Պատին Մասին



ԱՄՆ նախագահ Տանըլտ Թրամփ յայտարարած է Մեքսիքայի հետ սահմանին նախատեսուած պատի նախագիծին մէջ որոշ փոփոխութիւններու մասին: «Թուիթըր» վրայ ԱՄՆ առաջնորդը յայտնած է, որ մտադիր են ոչ թէ պեթոնէ, այլ պողպատէ պատ կառուցել:

«Մենք կը ծրագրենք պողպատէ պատ կառուցել, ոչ թէ պեթոնէ», գրած է Թրամփ՝ նշելով, որ պողպատն աւելի ամուր է եւ շատ աչքի չի զարներ:

ԱՄՆ նախագահը նաեւ յայտնած է, որ փոխնախագահ Մայք Փենս աւելի կանուխ տեսնուած է Դեմոկրատ կուսակցութեան ներկայացուցիչներուն հետ եւ քննած սահմանային անվտանգութեան կապուած հարցեր: ■

## Օտար Ներդրողներու Համար Թուրքիա Հետզհետէ Գրաւչութիւնը Կը Կորսնցնէ

Թուրքիոյ տնտեսական քաղաքականութեան ուսումնասիրման հիմնարկին գնահատումով՝ Թուրքիա հետզհետէ գրաւչութիւնը կը կորսնցնէ արտասահմանցի ներդրողներու համար, հաղորդած է «Սէօզճու» կայքը:

Հիմնարկին պատրաստած զեկոյցին համաձայն՝ անցած հոկտեմբերի դրութեամբ արտասահմանէն Թուրքիա ուղղակի ներդրումներուն ծաւալը հասած է 10.7 միլիառ տոլարի, մինչ Թուրքիայէն արտասահման ներդրումներուն ծաւալը եղած է 3.8 միլիառ տոլար:

Զեկոյցով ուշադրութիւն կը հրաւիրուի այն հանգամանքին վրայ, որ Թուրքիա կը կորսնցնէ իր գրաւչութիւնը օտար ներդրողներու համար, միւս կողմէ տեղական ընկերութիւնները սկսած են հետզհետէ աւելի հետաքրքրուիլ արտասահմանեան շուկայով: ■

## ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԱՇՈՒԵԿՇԻՌԸ
# Կը Դիմանա՞ն Մինչեւ Կկուի Գարնանային Կանչը

2018 *Թուականի ընթացքում Հայաստանում ծաւալուած ներքաղաքական գործընթացների խորքային քննութիւնը անմիջապէս երեւան է հանում մի իրողութիւն. տեղի են ունեցել ոչ թէ յեղափոխական փոփոխութիւններ, այլ մինչ այդ գոյութիւն ունեցող քաղաքական համակարգի ու տնտեսական յարաբերութիւնների պարզ վերարտադրութիւն՝ աւելի աւտորիտար ու մենիշխանական տեսքով:*

*Այսինքն՝ «Թաւշեայ յեղափոխութեան» հետեւանքով փոխուել են սոսկ գործող անձինք ու կուսակցութիւնները, բայց նոր գործադիր իշխանութիւնն ու Դեկտեմբերի 9-ին նրա ձեւաւորած նոր Ազգային ժողովն ու նաեւ գրեթէ անփոփոխ մնացած դատաիրաւական համակարգը իրենց խորքային էութեամբ մնացել են նոյնը:*

*Բայց ահա Հայաստանի տնտեսութիւնն այդ ընթացքում ակնյայտ անկում է ապրել ու դեգրադացուել նոր իշխանաւորների ոչ արհեստավարժութեան ու պոպուլիստական քայլերի հետեւանքով:*

*Սա նշանակում է, որ առաջիկայում անխուսափելի է դառնալու ամէն մի յեղափոխութեանը յաջորդող քաղաքական սկեպսիսը՝ «ինչի՞ համար էր այս ամէնը, եթէ նախկինում աւելի լաւ էր, քան այսօր» հարցման տեսքով: Ի վերջոյ, մարդկանց չեն հետաքրքրում ո՛չ կոնկրետ անձանց անուն-ազգանունները, ո՛չ էլ այս կամ այն կուսակցութեան անուանման բարդ յապաւումները:*

*Նրանց հետաքրքրում է իրենց կենսակերպում տեղի ունեցող դրական կամ բացասական փոփոխութիւնների դինամիկան, ինչն այսօր՝* 2018*-ի տարեվերջին, ամենեւին էլ իշխանափոխութեան ու նրա ճարտարապետների օգտին չի վկայում:*

*Ուստի այս խորքային միտումները մի կողմ դնելով՝ յեղափոխութիւնը որպէս անձանց ու կուսակցութիւնների սովորական փոխատեղում համարող մեր քաղաքական «ֆորմալիստներին» խորհուրդ ենք տալիս մի փոքր էլ սպասել, որպէսզի ձմռանը սպասուող դժուարութիւնները, գումարուելով Ղարաբաղի հարցի նոր սրացման անխուսափելիութեանը, ամբողջովին բացեն ժողովրդի կիսափակ աչքերը:*

*Դրանից յետոյ իշխանափոխութեան հետեւանքով ձեւաւորուած նոր քաղաքական թիմի բարձր հեղինակութեան հետ մեծ յոյսեր կապողներին առաջարկում ենք* 2018*-ի գարնանը քաղաքական ասպարէզը գրաւած նոր իշխանութիւնների վարկանիշը համեմատել դրանից ուղիղ մէկ տարի առաջ տեղի ունեցած* 2017*-ի խորհրդարանական ընտրութիւններում իշխող ուժի հաւաքած բարձր տոկոսների հետ:*

*Հենց ներկայ պահին՝* 2018*-ի վերջին օրերին, նախկինների ու ներկաների միջեւ իրականացուող համեմատութիւնն արդէն լուրջ հիմքեր է ստեղծում ռացիոնալ գնահատականի համար, քանզի սառը դատողութեամբ առաջնորդուելու պարագայում արձանագրում ենք հետեւեալ յստակ ու անհերքելի քաղաքական իրողութիւնները:*

### Առաջին՝ Հայաստանի գործադիր իշխանութիւն

2018*-ի Մայիսի* 8*-ից յետոյ ձեւաւորուած եւ այժմ իր հիմնական գործող դէմքերով նոր խորհրդարանի բացարձակ մեծամասնութեան կողմից կրկին վերանշանակուող Ն.Փաշինեանի «յեղափոխական կառավարութիւնն» անցած ամիսներին շատ աւելի վատ է աշխատել, քան* 2017*-ի խորհրդարանական ընտրութիւններից մինչ այդ ժամանակահատուածը գործած Կ. Կարապետեանի կաբինետը:*

*Ապացոյցն ուղղակի սովորական ու պարզ թուաբանութիւնն է. ցանկացողները կարող են Հայաստանի յաջորդական կառավարութիւնների արձանագրած հիմնական տնտեսական ցուցանիշները համեմատել՝ արդէն իսկ հրապարակուած պաշտօնական վիճակագրութեան հիման վրայ: Ակնյայտ է, որ Ն. Փաշինեանի գլխաւորած կաբինետը անցած ամիսներին, մեղմ ասած, շատ աւելի համեստ արդիւնքներ է արձանագրել բոլոր հիմնական բնագաւառներում, քան իր նախորդները:*

*Աւելին՝ հենց վերջիններիս կողմից սկսուած որոշ ծրագրերի անաւարտութեան պատճառով են դեռեւս պահպանւում տնտեսութեան զարգացման այն դրական ցուցանիշները, որոնք առաջիկայ ձմռանը նոյնպէս բացասականի են վերածուելու:*

### Երկրորդ՝ Հայաստանի օրէնսդիր իշխանութիւններ

2017 *Թուականի գարնանը տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւնների շնորհիւ ձեւաւորուած Հայաստանի Ազգային ժողովը, որպէս ժողովրդի ընտրած ներկայացուցչական մարմին, իր բոլոր հիմնական ցուցանիշներով շատ աւելի ժողովրդավարական էր եւ աւելի պրոֆեսիոնալ, քան Դեկտեմբերի* 9*-ի «ափալ-Թափալի» միջոցով ստեղծուած խորհրդարանը: Ապացոյցները շատ են՝*

1. 2017*-ին ընտրուած ԱԺ-ում գոյութիւն ունէր յստակ ու ընդգծուած ընդդիմութիւն ի դէմս «Ելք» դաշինքի, որ ներառում էր երեք կուսակցութիւններ՝ «Քաղաքացիական պայմանագիր, «Լուսաւոր Հայաստան» ու «Հանրապետութիւն»:*

2. *Մինչեւ իշխանափոխութիւնը Հայաստանի Ազգային ժողովում գոյութիւն ունէին եւրոպական չափանիշներով անհրաժեշտ՝ քաղաքական գունապնակի բոլոր հիմնական գոյները՝ ազգային պահպանողականներ (ՀՀԿ), լիբերալներ (ԲՀԿ), սոցիալիստներ եւ ազգային կուսակցութիւններ (ՀՅԴ) եւ պոպուլիստներ («Ելք»): Իսկ ահա Դեկտեմբերի* 9*-ից յետոյ մենք ունենք պոպուլիստներ («Իմ քայլը») + լիբերալ պոպուլիստներ («Լուսաւոր Հայաստան») եւ պարզապէս՝ լիբերալներ (ԲՀԿ), այսինքն՝ մի կատարեալ անոմալիա:*

*Իսկ ինչ վերաբերում է մեր խորհրդարանականների պրոֆեսիոնալիզմին, ապա այստեղ ուղղակի համեմատելու բան չկայ, քանի որ հեռացել են ամենապրոֆեսիոնալները՝ տասնեակ տարիների օրէնսդրական գործունէութեան փորձ ունեցող ՀՀԿ-ի ու ՀՅԴ-ի պատգամաւորները, իսկ նրանց փոխարէն աւելացել են* 2018 *Թուականի գարնանը աւտոմեքենաներից կախուող «կասկադիորները», ասֆալտի վրայ պառկողները կամ Իսլանդիայի հաւաքականին երկրպագելու համար կիրառուող «դըմփ-դըմփ-հու» հնարքին տիրապետող դեռահասները:*

*Թէ ինչպէս են նրանք առաջիկայում օրէնքներ գրելու՝ չգիտենք, բայց հաստատապէս տեղեակ ենք, որ նրանց մի մասը տապալուել է անգամ իր ուսումնառութեան ընթացքում եւ չի կարողացել ստանալ գիտական աստիճաններ, այսինքն՝ անգրագէտ է ե՛ւ քաղաքական, ե՛ւ մասնագիտական առումով:*

### Երրորդ՝ Հայաստանի դատական իշխանութիւններ

*Ինչպէս նախկինում, այնպէս էլ հիմա իշխանութեան այս ճիւղը գործադիրի վերահսկողութեան տակ էր եւ է: Ապացոյցը՝ դատական իշխանութեան անկախութիւնն ապահովելու կարգախօսով* 2018*-ի գարնանը հրապարակ եկած «յեղափոխականների» կառավարութեան ԱԱԾ-ի ու ՅՔԾ-ի պետերի խօսակցութիւնների յայտնի ձայնագրութիւններն են:*

*Զպէտք է մոռանալ նաեւ, որ նախկինում երկրի նախորդ նախագահին չէին ձերբակալում ու պահում կալանքի տակ, ինչի հնարաւորութիւնը, նաեւ անհրաժեշտութիւնը կար, օրինակ,* 2008*-ի Մարտի* 1*-ի իրադարձութիւններից յետոյ, քանի որ յարգանք ունէին պետականութեան ու նրա խորհրդանիշերի հանդէպ:*

*Իսկ անցած ութ ամիսների ընթացքում մեր երկրի միւս՝ երկրորդ նախագահին արդէն երկու անգամ անհասկանալի ու զաւեշտական հիմնաւորումներով բանտ են նետել, այն պարագայում, երբ դեռ յայտնի չէ, թէ նրա հանդէպ ինչ որոշում կ՚ընդունի դատարանը:*

*Այսպիսով* 2018 *Թուականի գարնանը տեղի ունեցած իշխանափոխութեան հետեւանքով անցած ութ ամիսներին տեղի է ունեցել Հայաստանի իշխանութեան երեք ճիւղերի գործունէութեան հիմնական որակական ու քաղաքական ցուցանիշների անկում:*

*Բայց սա դեռ սկիզբն է, քանի որ, ինչպէս գիտենք, Դեկտեմբերի* 9*-ի խորհրդարանական ընտրութիւններն արագացուել են* 2018-2019 *Թուականների ձմռան դժուարութիւնների հետ կապուած անխուսափելի դարձող՝ է՛լ աւելի բացասական ցուցանիշներ արձանագրելու ստոյգ հեռանկարից խուսափելու համար:*

*Ուստի տեղի ունեցածի վերջնական գնահատականը կը տրուի* 2019*-ի Մայիսի* 8*-ին, երբ Ն.Փաշինեանի գլխաւորած կաբինետը կը բոլորի իր գործունէութեան մէկ տարին: Միայն այդ ժամանակ պարզ կը դառնայ, թէ ինչ հետեւանքներ ունեցաւ Հայաստանի համար այդ մէկամեայ քաղաքական էքսպերիմենտը:*

*Մնում է յուսալ, որ այդ ընթացքում նոր իշխանութիւնները կը կարողանան յաղթահարել այն նոր փորձութիւնները, որ սպասում են նրանց առաջիկայ ամիսների ընթացքում եւ ինչպէս մեզ նման յոռետեսներին, այնպէս էլ դեռեւս իրենց հաւատացող լաւատեսներին, ժամանակից շուտ չեն գրկի իրենց արձանագրած մէկամեայ արդիւնքների հաշուեկշիռը կազմելու հաճոյքից:*

*Քանզի եթէ նրանք շարունակեն աշխատել «յեղափոխական»* 2018*-ի ութ ամիսների նման, ապա հազիւ թէ դիմանան մինչեւ կկուի գարնանային կանչը:*

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ
«Հայոց Աշխարհ»

# Դեսպան Աթաբէկեան Այցելած Է Լիբանանի Պաշտպանութեան Նախարարին



*Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբէկեան Յունուարի 2-ին այցելած է պաշտպանութեան նախարար Եաագուպ Սարրաֆի, որուն հետ քննած է պաշտպանութեան մարզին մէջ երկկողմանի եւ բազմակողմանի գործակցութեան ներկայ իրավիճակն ու այդ գործակցութիւնն ամրապնդելու հեռանկարները:*

*Լիբանանի եւ Հայաստանի կառավարութիւններու կազմութենէն առաջ որոշուած է ստեղծել ժամանակաւոր յանձնախումբ մը, որ երկու երկիրներու կառավարութիւններուն միջեւ ռազմական ոլորտին վերաբերող համաձայնագիրը աշխատանքային կարգով ամբողջականացնէ՝ զայն հետեւողականօրէն կեանքի կոչելու նպատակով:*

*Սարրաֆ յաջողութիւն մաղթած է դեսպան Աթաբէկեանի՝ ստանձնած դիւանագիտական առաքելութեան մէջ, խոստանալով բազմակողմանիօրէն աջակցիլ հայ-լիբանանեան բարեկամական յարաբերութիւններուն նոր որակի հաղորդման:* ■

«ԱՌԱՋԻՆ ԴԻՄՔԻՑ»

# «Առաւօտ»ի Հարցազրոյցը Արթուր Խաչատրեանի հետ



*Հոկտեմբերի 2-ին գիւղատնտեսութեան նախարարի պաշտօնից ազատուած Արթուր Խաչատրեանը, որին և այլ դաշնակցականների ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինն աւելի վաղ էր յետ կանչել կառավարութիւնից՝ «Առաւօտի» հարցին՝ վիրաւորուե՞ց, որ աշխատանքից ազատուելու մասին յայտարարութիւնը վարչապետ Նիկոլ Փաշինեանն արեց փողոցում, պատասխանեց. «Ի հարկէ: Դրանից առաջ, շուրջ մէկ ամիս ես օրական 14 ժամ շարունակ եղել եմ հիմնարկում... Առանց Շաբաթ-Կիրակիի: Երկու օր գիշերել եմ հիմնարկում: Երկու անգամ Արցախ եմ գնացել, երկու անգամ՝ Տաւուշ եւ այլն:*

*Թէ ես, թէ Արծուիկ Մինասեանը՝ ինչպէս նաեւ կառավարութեան միւս անդամները, ամենայն պատասխանատուութեամբ, նուիրուածութեամբ աշխատում էինք կառավարութեան ծրագիրն իրականացնելու, երկիրն անցնցում պահելու համար՝ մինչեւ հերթական ընտրութիւնները: Ամէն դէպքում՝ վարչապետը նախարար հեռացնելու իրաւունք չունի, իրաւունք ունի ներկայացնել առաջարկութիւն: Ուրիշ բան, որ ամբոխը պահանջում էր...»:*

*Նախկին նախարարը քննադատեց «Կառավարութեան կառուցուածքի եւ գործունէութեան մասին» օրէնքի նախագծի շրջանառուող տարբերակը, ըստ որի՝ մասնաւորապէս նախատեսւում է, որ գիւղատնտեսութեան նախարարութիւնը միանում է տնտեսական զարգացման նախարարութեանը: Նման փոփոխութիւններն արդարացնող հնչող փաստարկին, թէ տարիներ շարունակ ասուել է, որ պետական կառավարման համակարգն ուռճացուած է՝ Արթուր Խաչատրեանն այսպէս հակադարձեց. «Դէ, գիտէք, եթէ միայն ուռճացուած ապարատն է հիմնական առաջմղիչ ուժը՝ այդ դէպքում կարելի է մշակոյթը միացնել գիւղատնտեսութեանը եւ գիւղական մշակոյթ զարգացնել... Ինչո՞ւ ենք մենք գիւղատնտեսութիւնը, որը գեներացնում է մեր համախառն ներքին արտադրանքի* 15 *տոկոսը (եթէ դրան գումարենք գիւղատնտեսական վերամշակումը, ապա եւս* 10 *տոկոսը), այսինքն՝ քառորդը տուող նախարարութիւնը միաւորում տնտեսական զարգացման նախարարութեանը»:*

*Հետաքրքրուեցինք, թէ արդեօք չի՞ նոյնացնում գիւղատնտեսութեան ոլորտը համապատասխան նախարարութեանը: Յիշեցնենք, որ մշակոյթի նախարարութեան առնչութեամբ վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը լրագրողների հետ զրոյցում հակադարձել էր. «Ըստ էութեան ես ժողովրդից ստացել եմ մանդատ, այդ պրոցեսն իրականացնելու համար: Ինձ ուրիշ բան անհանգստացրեց, մշակոյթի նախարարութեան աշխատակիցների յայտարարութիւնը, երբ որ նրանք ահազանգում էին, ասում էին մի կրճատէք, որովհետեւ մշակոյթը միշտ եղել է հայ ժողովրդի այցեքարտը:*

*Դա արդէն շատ վատ ազդակ է: Այսինքն, մշակոյթի նախարարութիւնն ինքն իրեն հայ մշակոյթի հետ նոյնացնո՞ւմ է: Ուզո՞ւմ էք էքսպերիմենտ անենք՝ երեք ամիս, հինգ ամիս կամ վեց ամիս գործադուլ անենք, տեսնենք մշակոյթի կեանքում ինչ-որ բան տեղի կ՚ունենա՞յ»:*

*Հարցին՝ ի՞նչ է կարծում, եթէ գիւղատնտեսութեան նախարարութեան աշխատակիցները եւս գործադուլ անէին՝ ի՞նչ կը փոխուէր այդ ոլորտում, պրն Խաչատրեանը, մասնաւորապէս, պատասխանեց, թէ կարելի է ցանկացած նախարարութեան ձեռքից լծակները վերցնել, բիւջէն պակասեցնել՝ յետոյ ասել, թէ արածներդ ի՞նչ է. «Եթէ փորձենք նախարարութեան ձեռքից գործիքակազմը վերցնենք ու որեւէ բան չտանք՝ ի հարկէ, գիւղացին կ՚ասի, թէ կաս-չկաս՝ ինձ դրանից ի՞նչ օգուտ. կարկուտը խփում է՝ գալիս-կուտմ-բողոքում ենք, մի կերպ մի քանի կոպէկ տալիս էք, կաթ մթերող, կաթնամթերք արտադրող ընկերութիւնները գները գցում են՝ որեւէ բան չէք անում՝ ասում էք, ազատ շուկայական յարաբերութիւններ են՝ գնացէք, ինչ ուզում էք՝ արէք»:*

*Արթուր Խաչատրեանը վստահեցրեց. «Աշխարհում որեւէ նորմալ երկիր չկայ՝ որտեղ չլինի գիւղատնտեսութեան նախարարութիւն»: Նա նաեւ ասաց, որ «եթէ կառավարութեան բարեփոխումների մասին ենք խօսում՝ աւելի ճիշտ կը լինէր այսօր անդրադառնալ սուպերվարչապետական համակարգին»՝ մանաւանդ այն պայմաններում «երբ ընտրութիւնների արդիւնքում մենք ունենք գերկենտրոնացուած քաղաքական իշխանութիւն ու մի քաղաքական ուժ ունի շատ մեծ ներկայութիւն՝ սահմանադրական մեծամասնութիւն Ազգային ժողովում»:*

*Այս եւ մի քանի այլ գործօններ, ըստ պրն Խաչատրեանի՝ վկայում են, որ ունենք «իշխանութեան գերկենտրոնացում, ինչը ռիսկային է թէ երկրի համար, թէ իշխանութեան»: Մեր զրուցակիցը Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններում Դաշնակցութեան համամասնական ցուցակի 3-րդ համարն էր: Եւ նրանից հետաքրքրուեցինք՝ արդեօք վիրաւորա՞նք չէ ընտրողների հասցէին ընտրութիւններից յետոյ ՀՅԴ Հայաստանի ԳՄ տարածած յայտարարութեան հետեւեալ պնդումը. «Ձեւաւորւում է Ազգային ժողով առանց յստակ գաղափարական եւ ազգային դիմագծի»:*

*Արթուր Խաչատրեանի պատասխանն էր. «Եթէ ասէք՝ ի՞նչ գաղափարախօսութիւն են դաւանում Ազգային ժողով անցած քաղաքական ուժերը՝ ես միգուցէ կարծիքս փոխեմ: Բայց իրօք՝ եթէ դուրս գանք փողոց ու թուղթուգրիչ տանք առաջին պատահած մարդուն՝ ասենք, դէ մի հատ գրի այն գաղափարախօսութիւնը, որին դաւանում են ԱԺ անցած քաղաքական ուժերը, տեսնենք, թէ ինչ կը գրեն: Կամ* 100 *հոգու տաս այդ հարցը՝ այդ* 100 *հոգու գրածներն իրար հետ կը նոյնականանա՞յ, թէ՞ ոչ: Այսինքն՝ իրօք խնդիր կայ, թէ ինչ գաղափարախօսութեան են դաւանում, ինչ մօտեցում կայ Արցախի հարցում»:*

«Առաւօտ»

# Հայաստան Մատակարարուող Ռուսական Կազը Կը Թանկանայ




Դեկտեմբերի 31-ին Մոսկուայի մէջ կայացած է ռուսական «Կազպրոմ» ընկերութեան կառավարման խորհուրդի նախագահ Ալեքսէյ Միլլերի եւ Հայաստանի փոխվարչապետի պաշտօնակատար Մհեր Գրիգորեանի աշխատանքային հանդիպումը:

«Կազպրոմ էքսպորտ» և «Գազպրոմ Արմենիա» ընկերութիւններուն միջեւ կնքուած է լրացուցիչ համաձայնագիրը, որ կը սահմանէ 2019-ին Հայաստանին մատակարարուող կազի սակագինը, Հայաստանի եւ Վրաստանի սահմանին ռուսական կազի սակագինը 1 Յունուար 2019էն սկսեալ 1000 խորանարդ մեթրը դարձաւ 165 տոլար:

Նախապէս այդ 1000 խորանարդ մեթրի սակագինը 150 տոլար էր:

Հայաստանի վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեան Մոսկուա կատարած իր վերջին այցելութեան ընթացքին նախագահ Փութինի հետ քննած էր Հայաստանին մատակարարուող ռուսական կազի սակը, իսկ Երեւան վերադարձին ան յայտարարած էր, որ այդ հարցով բանակցութիւնները կը շարունակուին:

Կազի սակագինի բարձրացման լուրը հրապարակուելէ ետք, Դեկտեմբերի 31-ին, Փաշինեան յայտարարած է, որ Հայաստանի սպառողներուն համար կազի սակագինը տեսանելի ապագային փոփոխութիւն պիտի չկրէ:

«Երէկ ես երկու անգամ հեռախօսազրոյց եմ ունեցել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Այդ հեռախօսազրոյցների թեման եղել է Հայաստանին մատակարարուող գազի գինը, եւ ըստ էութեան կարելի է ասել, որ եկել ենք լուծման՝ առնուազն առաջիկայ տեսանելի ապագայի համար: Կայ երկու օղակ գազի մատակարարման մէջ, մէկը՝ "Գազպրոմ" ռուսական ընկերութիւնն է ու այդ ընկերութեան կողմից "Գազպրոմ Արմենիա"ին մատակարարուող գազը, միւս օղակը՝ "Գազպրոմ Արմենիա"ից դէպի մեր հայաստանեան սպառողներ գազի մատակարարումը: Ըստ էութեան ստացուել է այնպէս, որ "Գազպրոմ Արմենիա"ն և "Գազպրոմ" ընկերութիւնները պէտք է վերանայեն գազի մատակարարման գինը: Այդ գնի մէջ որոշակի փոփոխութիւն է տեղի ունենալու, և գնի որոշակի բարձրացում է տեղի ունենալու: Բայց մեր ներքին կարգաւորումների շնորհիւ հայաստանեան սպառողների համար գազի գնի փոփոխութիւն տեղի չի ունենալու: Կը ֆիքսուի (կը ճշդուի, կը յստակացուի-Խմբ.) այս վիճակը, որից յետոյ անհրաժեշտութեան դէպքում նորից կ'անդրադառնանք: Գազի գնի թեման միշտ էլ մեր բանակցութիւնների սեղանին է լինելու: Ամէն դէպքում, մենք ամէն ինչ անում ենք, որպէսզի սպառողների համար յաւելեալ խնդիրներ չստեղծուեն», յայտնած է Փաշինեան:

Վարչապետի պաշտօնակատարը նշած է, որ Փութինի հետ ունեցած երկու հեռաձայնային զրոյցներուն ընթացքին միայն կազի գինի հարցը քննած է: ■

# Հայաստան Ընդգրկուած Է Զբօսաշրջութեան 2019-ի Ամենէն Մատչելի Երկիրներու «Ֆորպզ»ի Ցանկին Վրայ



Հեղինակաւոր «Ֆորպզ» (Forbes) ամսագիրը ներկայացուցած է ամենէն աժան ուղղութիւնները՝ 2019-ին ճանապարհորդելու համար: Ցանկը կազմելու համար, հեղինակը դիմած է զբօսաշրջութեան փորձագէտներու օգնութեան, խնդրելով երկուքական ուղղութիւն նշել կարօտալի յուշերու վերաբերեալ՝ վայր առ վայր, ուր վերջերս այցելած են եւ կը փափաքին այդ մասին պատմել բոլորին:

Նպատակը յարմար գիներով ճանապարհորդութեան համար լաւագոյն ուղղութիւններ գտնելն է: Պաշտօնական ցանկին վրայ ընդգրկուած են 18 երկիրներ, որոնց շարքին է նաեւ Հայաստան:

«Գտնուելով Կովկասեան լեռներուն մէջ՝ Հայաստան թաքնուած մարգարիտ է, ուր դեռեւս չէ հասած զանգուածային զբօսաշրջութիւնը, եւ այնքան բան ունի առաջարկելու՝ հարուստ պատմութիւն, գինեգործարաններ, տպաւորիչ բնապատկերներ, հնագոյն վանական համալիրներ եւ զարմանահրաշ լեռներ: Մայրաքաղաք Երեւանը գեղեցիկ քաղաք է՝ լայն պողոտաներով, համեղ ճաշեր մատուցող ճաշարաններով, թանգարաններով եւ տեղական ձեռագործ աշխատանքներ վաճառող խանութներով: Երեւանէն դուրս գեղատեսիլ բնութիւն է: Կրնաք այցելել աշխարհի հնագոյն գինեգործարանը, որ կը գտնուի Արենիի մէջ, ինչպէս նաեւ աշխարհի հնագոյն մայր տաճարը՝ Էջմիածին», գրուած է «Ֆորպզ»ի յօդուածին մէջ: ■

# Կարօ Փայլան Կ'անհանգստացնէ Թուրք Ազգայնականները

Թուրքիոյ մէջ Քրտամէտ Ժողովուրդներու Ժողովրդավարական Կուսակցութեան անդամ, Տիարպեքիրէն ընտրուած խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարօ Փայլան օրեր առաջ խորհրդարանին մէջ արտասանած խօսքին ընթացքին շնորհաւորած էր Հայաստանի ժողովուրդն ու իշխանութիւնները արտակարգ խորհրդարանական ընտրութիւններուն առիթով եւ կոչ ուղղած Թուրքիոյ իշխանութիւններուն՝ պատշաճ կերպով արձագանգելու Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի՝ հայ-թրքական յարաբերութիւնները կարգաւորելու համար երկխօսութիւն սկսելու պատրաստակամութեան մասին յայտարարութեան:

«Յաջողութիւն Նիկոլ Փաշինեանին եւ անոր ընկերներուն» նախադասութիւնը Փայլան արտասանած էր հայերէնով:

«Թերթ» կը գրէ, որ Փայլանի հայերէն խօսիլը խորհրդարանին մէջ բարկացուցած է ազգայնականները:

«Թուրքիոյ խորհրդարանի պաշտօնական լեզուն թրքերէնն է եւ ատիկա ամրագրուած է Թուրքիոյ Հանրապետութեան սահմանադրութեամբ: Երբ շարք մը քիւրտ պատգամաւորներ իրենց երդումը քրտերէն արտասանեցին, ատիկա բողոքի առիթ տուաւ ու անոնց պարտադրուեցաւ անգամ մը եւս արտասանել երդումը՝ այս անգամ թրքերէն: Ի՞նչ կ'ըլլայ, եթէ Թուրքիոյ մէջ ապրող իւրաքանչիւր ազգ խորհր-

(Շար.ը Դ. էջ)

# Թուրքիոյ Դէմ Համախմբում



Գրեց՝
ՍԱՐԳԻՍ ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ

Զգենք, որ Տոնըլտ Թրամփ իր (չ)հասկցած ձեւով դիմագրաւէ դեմոկրատներուն նորագոյն յարձակողականը, «ռուսական միջամտութեան» ամբաստանութիւնները, Մեքսիքայի սահմանին վրայ պատ կառուցելու ծրագիրն ու տնտեսական բազմաճիւղ մարտահրաւէրները, Էմանուէլ Մաքրոնն ալ թող «Դեղին բաճկոնաւոր»ներուն դէմ իր մրցումի դաշտին մէջ:

Թող Հնդկաստանն ալ իր միջոցներով լուծում որոնէ հնադարեան տաճարէ մը ներս կիներու մուտքը արտօնող դատական որոշումին դէմ բարձրացած փոթորիկին:

Պահ մը մեր աչքերը հեռացնենք աշխարհը յուզող աղէտներէն ու անմիջական այլ իրադարձութիւններէ եւ կեդրոնանանք այնպիսի զարգացումներու վրայ, որոնք կը շահագրգռեն, պէ՛տք է շահագրգռեն մեզ՝ հայերս, Հայաստանի մէջ թէ արտերկրի տարածքին: Ի մտի ունինք Սուրիոյ եւ ընդհանրապէս դրացիներուն հանդէպ Թուրքիոյ վերանորոգուած ախորժակներուն թղթածրարը եւ զայն ձախողութեան մատնելու պահանջը:

Սուրիոյ, Իրաքի, արաբական այլ երկիրներու եւ Կիպրոսի մէջ թրքական անբարեմիտ, չըսելու համար ոճրային ու աշխարհակալական դիտաւորութիւնները երկար պատմութիւն կերտած են տասնամեակներէ ի վեր. սեւով ու կարմիրով հիւսուած այդ պատմութիւնը վերջին ամիսներուն նոր էջեր կ'արձանագրէ աշխարհի աչքերուն ու ականջներուն առջեւ, զարգացումներ՝ որոնց դիմաց մենք՝ հայերս, ընդհանրապէս կը մնանք լուռ հանդիսատես, կամ կրաւորական քաղաքականութեան խրամատին մէջ կը պահենք մենք մեզ, մինչդեռ թրքական մողոքին ենթակայ որեւէ այլ ժողովուրդի չափ, որեւէ այլ ժողովուրդէ աւելի, մե՛նք գիտենք այդ պատմութեան ահաւոր հետեւանքները, հետեւաբար նաեւ կը կանգնինք լուրջ մարտահրաւէրի դէմ յանդիման:

Յիշատակենք ու անցնինք արագօրէն. Թուրքիա արեւմտեան զինակցութեան անդամ է, սակայն նաեւ առիթ չի փախցներ իր դաշնակիցներուն հետ վարուելու թշնամական ոճով. երբեմն ալ կը հագուի Արեւմուտքի մրցակից՝ Ռուսիոյ հետ բարեկամութիւն ու մերձեցում խաղալու պատմուճանը, ու այս «հաւասարակշռուած» վիճակին մէջ, նեղոամիտ վերաբերմունքի կ'արժանանայ թէ՛ դաշնակիցներէն եւ թէ անոնց հակադրուող ուժերէն: Այս «վահան»ով զրահաւորուած՝ Թուրքիա յաջողած է անպատիժ կերպով շարունակել քիւրտերուն ջարդը՝ Իրաքի, Սուրիոյ մէջ թէ իր հողերուն վրայ, սանձարձակ միջամտութիւններ կը կատարէ (նոր միջամտութիւններու ալ կը պատրաստուի) հարաւի իր դրացիներուն սահմաններէն ներս, մինչեւ իսկ կը յաւակնի խաղաղարար միջնորդի գլխարկով ներկայանալ եւ համախոհներ կը գտնէ անմիջական շրջապատին մէջ ու աւելի հեռուները:

Ամերիկեան ուժերուն Սուրիայէն հեռացման նախագահ Թրամփի որոշումը, 19 Դեկտեմբերին, նոր մտրակահարումի ենթարկեց թրքական ախորժակները. անդին, ահազանգ հնչեց, որ եթէ այդ որոշումին գործադրութիւնը լրումին հասնի, Թուրքիա կրնայ ոճրային նոր յարձակում գործել Սուրիոյ հիւսիսային գօտիներէն ներս, «ահաբեկիչ քիւրտեր» հետապնդելու պատճառաբանութեամբ, վստահ ըլլալով, որ ստեղծուած մթնոլորտը աւելի՛ թանձր մշուշ պիտի հաւաքէ «իսլամական պետութեան» ոճրածին խմբաւորումներուն իր տրամադրած աջակցութեան վրայ:

Մէկ բան յստակ է եւ անվիճելի. Ցեղասպանութենէն առաջ իսկ իր ոճրային ու անարդար վարմունքով ծանօթ Թուրքիոյ էութենէն բան չէ փոխուած, աւելի՛ն, Անգարայի վարիչները չեն կրնար, իրաւունք չունին խաղաղարարի կամ հաշտարարի դերակատարութիւն ունենալու ո՛չ մօտիկ, ո՛չ ալ հեռաւոր երկիրներու մէջ: Այս ճշմարտութիւնը բացայայտելու կոչուած են բոլոր անոնք, որոնք կրած են նման «բարեմիտ միջամտութիւններու» ծանրագոյն հետեւանքները: Ու մենք՝ հայերս, կը գտնուինք այդ խրամատին առաջին գիծին վրայ:

Հետեւաբար, մեր քաղաքական ամբողջ մեքենան՝ հայրենի պետութիւնը իր դիւանագիտական ցանցով ու հնարաւոր բոլոր միջոցներով, նաեւ սփիւռքեան քաղաքական բոլոր ուժերը՝ քաղաքական, քարոզչական եւ այլ «հրետանիներով», հրաւիրուած ենք օրը օրին հետեւելու եւ բացայայտելու թրքական անմարդկային դիտաւորութիւնները եւ հաշուետուութեան բերելու Անգարայի վարիչները:

Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքել գրեթէ միայնակ ձայն բարձրացուց անցեալ շաբաթ, երբ թրքական ոճրային ու միջազգային օրէնքներ ոտնակոխելու համազօր ծրագիրները բացայայտ դարձան: Կարելի է մտածել, որ Մերքել նման համարձակ արտայայտութեամբ զգուշացման հրաւիրեց Թուրքիան, որովհետեւ անոր քաղաքական կեանքի օրերը հաշուըրուած են եւ միջ-պետական յարաբերութիւնները այլեւս ուրիշներու չափ չեն կաշկանդեր զինք, սակայն պէտք չէ մոռնալ, որ Գերմանիա աւելի կանուխ ալ որդեգրած է Թուրքիան քննադատող կեցուածքներ, անիկա իր ուժերը հեռացուց Ինճիրլիքէն, իսկ աւելի քան երեք տասնամեակ առաջ, խստիւ քննադատեց Թուրքիան, որ իրմէ գնուած հրասայլերով կը կործանէր Տերսիմի գիւղերը: Ու Գերմանիոյ կառավարութիւնը տակաւին վերջնական ճանաչում չէ տուած Ցեղասպանութեան, հակառակ խորհրդարանին ու նախագահին ծանօթ կեցուածքներուն:

Հայաստանը պաշարման տակ պահող եւ իր պատմական ոճիրները ուրացող Թուրքիան պէտք է ամէ՛ն օր պահենք մեր քաղաքական, դիւանագիտական ու քարոզչական պայքարին օրակարգին վրայ: Այս ծիրին մէջ, մամուլն ընդհանրապէս աշխոյժ է, սակայն քաղաքական ու դիւանագիտական հետապնդումը անհրաժեշտ տարողութեամբ չի կատարուիր. Եւրոպական Միութեան դուռներուն առջեւ սպասող Թուրքիան կը մտահոգենք Եւրոպական խորհրդարանին մէջ մեր կարգ մը աշխատանքներով, որոշ յառաջխաղացքներ կ'արձանագրենք կարգ մը պաշտօնատարներ կաշառած ըլլալու Ատրպէյճանի գայթակղութեանց դէմ, սակայն անդին, երբեմն մեղմ ձայներ ալ կը բարձրանան, թէ Հայաստան Թուրքիայէն պահանջներ չունի, բնական յարաբերութեանց էջը բանալու համար՝ նախապայմաններ չունի. անդին, անհրաժեշտ տարողութեամբ քաղաքական ու դիւանագիտական ուժ չենք գործածեր այն գիծին վրայ, որ ցոյց կու տայ Ատրպէյճանի հակահայ, հակա-Հայաստան ու հակա-Արցախ ընթացքին Թուրքիոյ անվերապահ աջակցութիւնը: Պարզ բառերով՝ Թուրքիոյ ու Ատրպէյճանի հանդէպ բարեմտութիւն խաղալու մեր ընթացքով, կը յաջողինք միայն մենք մեզ... խաբել ու տուայտիլ կրաւորականութեան ոլորտներուն մէջ:

Դրացիներուն, ընդհանրապէս մարդկութեան դէմ Թուրքիոյ ոճրային ու անբարեխիղճ տրամադրութիւններուն բացայայտումը մեզի համար պիտի ըլլայ օրակարգի մնայուն հարց, եւ ո՛չ միայն Ապրիլ 24-ին սպասող շարժում կամ Էրտողանի թիկնապահներուն ծանօթ վայրագութեանց դէմ միայնակ հակադարձութիւն: Եւ ինչո՞ւ չանդրադառնալ, որ այս ճամբուն մէջ առանձին չենք. ունինք ճակատագրակից քիւրտերը, կիպրացիները, եզիտիներն ու մինչեւ իսկ արաբական աշխարհը, որուն «մթագնած» յիշողութեան մէջ պէտք է արթնցնել թրքական վնասակար վարմունքը՝ աւելի քան դար մը առաջ, որ կը շարունակուի մինչեւ այսօր. Սուրիոյ, Իրաքի, մինչեւ իսկ Լիբանանի ու Եգիպտոսի (եւ այլուր) զարգացումները, Կիպրոսի կէսին գրաւուած մնալը եւ նման աղաղակող իրականութիւններ արդեօք բաւարար զինամթերք չե՞ն տրամադրեր այս իմաստով, որպէսզի համապատասխան յարաբերութիւններու ճամբով ուրուագծենք Թուրքիոյ դէմ «հայակեդրոն քոալիսիոն» մը: Իսկ առաջին յենարա՞նը. Հայաստանի քաղաքական ուժերուն միջեւ գործակցութիւնն ու Հայաստան-Սփիւռք կամուրջին համար նոր սիւներու կառուցումը՝ անշուշտ, ապա նաեւ՝ յիշեալ երկիրներուն մէջ հայութեան ներկայութիւնն ու ստեղծած գործակցական կապերը:

Բնականաբար պիտի մտածուի, որ պէտք է իրատես ըլլալ, «ոտքերը գետնէն չկտրել», որովհետեւ քաղաքական ու ռազմավարական հազար ու մէկ գործօն կրնան ջլատել նման նախաձեռնութիւն. փաստեր կրնան շարուիլ, թէ, օրինակի համար, արաբական միասնութիւնը այսօր ինչպիսի տարտղնումի ենթակայ դարձած է ու մատնուած՝ անհատամ դրութեան: Սակայն Թուրքիայէն վնասներ կրողներու «քոալիսիոն» (համախմբում – Խմբ.) մը կարելի է իրականացնել յստակ մարտավարութեամբ մը, որմէ կարելի է պտուղներ քաղել, օգտուելով մերքըլեան ու այլ հաւանական ալիքներէ:

3 Յունուար 2019

# Արցախը՝ Globe Spots-ի «Թոփ 10»ում

Globe Spots-ը կազմել է իր 11-րդ «Թոփ 10» երկրների այս տարուայ ցանկը: Globe Spots-ն Անգոլայի, Շուեդիայի, Բութանի, Թայուանի, Դոմինիկեան Հանրապետութեան հետ այս ցանկում ներառել է նաև Արցախը՝ ներկայացնելով նաև որպէս Լեռնային Ղարաբաղ: 2019թ. ճանապարհորդութեան համար ընտրած այս 10 երկրները Globe Spots-ն ներկայացնում է որպէս մուտքի արտօնագրի՝ վիզային համակարգը դիւրացրած երկրներ և զբօսաշրջութեան համար առաւել մեծ ուշադրութեան արժանի:

Արցախը ներկայացնելով՝ Globe Spots-ը գրում է. «Որքան աւելի շատ պետութիւններ են մեղմացնում վիզայի պահանջները՝ մուտքի արտօնագրի գործընթացն, այնքանով նուազում է "աշխարհից կտրուած" վայրերի ու տարածաշրջանների թիւը: Ճանապարհորդողի տեսանկիւնից միշտ հետաքրքիր է այցելել նոր վայրեր, որոնք միանգամայն տարբերւում են միւսներից: Արցախի Հանրապետութիւնը հենց այդ վայրերից է: Քչերին յայտնի եւ ճանաչուած է՛լ աւելի քչերի կողմից, վերջերս փոխեց իր անունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը վերանուանուեց Արցախի Հանրապետութիւն»:

Անկախ ճամբորդողների այս կայքը Արցախի մասին գրում է. «Հանրապետութիւնը գտնուել է Ադրբեջանի սահմաններում, բայց այնտեղ միշտ բնակուել են հիմնականում հայեր: Խորհրդային տարիներին Արցախը փոխանցուել է Ադրբեջանին: Սա հետագայում յանգեցրել է զինուած հակամարտութեան ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ: Զինադադար պատերազմն աւարտուել է 1994 թուականին, վերջին բախումները տեղի էին ունեցել 2016-ին»:

Կայքը նշում է. «Հաշուի առէք՝ Արցախ հնարաւոր է այցելել միայն Հայաստանի տարածքով: Հետագայում ձեր մուտքն Ադրբեջան կը մերժուի, եթէ նրանք ձեր՝ Արցախ այցի ապացոյց կամ փաստ ունենան»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԵԱՆ

## Լոյս Տեսած Է Սարգիս Մկրտչեանի «Պանթիւրքական Հոսանքները Ժամանակակից Իրանում» Գիրքը

Երեւան հրատարակուած է իրանագէտ Սարգիս Մկրտչեանի «Պանթիւրքական հոսանքները ժամանակակից Իրանում» մենագրութիւնը: Հետազօտութիւնը կատարուած է Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրութեան կեդրոնը և տպագրուած ՀՀ Սփիւռքի նախարարութեան հովանաւորութեամբ:

Ուսումնասիրութիւնը նուիրուած է ժամանակակից Իրանի մէջ փանթրքական շարժումներու պատմութեան, այդ շարժումները ղեկավարող կառոյցներու գործունէութեան և գաղափարախօսութեան: Քննուող հարցերը հայ հանրութեան կը ներկայացուին առաջին անգամ:

Ստորեւ՝ մենագրութեան յառաջաբանը.




### ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



*Պանթիւրքիզմի մասին լսելիս յաճախ մեր հայեացքն ուղղւում է դէպի Թուրքիայի Հանրապետութիւն, իսկ վերջին տարիներին՝ նաեւ Ադրբեջանի Հանրապետութիւն:*

*Մերթ ընդ մերթ աշխատութիւններ են հրատարակւում նաեւ Միջին Ասիայում եւ Չինաստանի Սինցզեան նահանգում պանթիւրքական գործունէութեան վերաբերեալ:*

*Իրանում պանթիւրքիզմի գաղափարախօսութեան եւ պանթիւրքական կազմակերպութիւնների եւ գործիչների առկայութեան ու գործունէութեան մասին հայկական մամուլում եւ մասնագիտական աշխատութիւններում շատ քիչ տեղ է յատկացուած:*

*Հայ քաղաքական եւ գիտական շրջանակների հետ իմ յարաբերութիւնների ժամանակ երբեմն ականատես եմ եղել, թէ ինչպէս են նրանցից շատերը զարմանքով լսում, որ նման հարց գոյութիւն ունի Իրանում: Պատճառը թերեւս այն է, որ հայերը Իրանը դիտում են որպէս մէկ ու միասնական ամբողջութիւն ու չեն պատկերացնում, որ Իրանում կարող են գոյութիւն ունենալ անջատողական միտումներ: Պատճառ կարելի է համարել, թերեւս, նաեւ այն վստահութիւնը, որ հայերն ունեն իրանցիների նկատմամբ: Կամ էլ հայերը Իրանը դիտում են որպէս հզօր պետութիւն, որը կարող է կանխել նման վտանգները:*

*Ինչ էլ լինի պատճառը, իրականութիւնն այն է, որ Իրանում գոյութիւն ունեն պանթիւրքական միտումներ, որոնք խիստ վտանգաւոր են ո՛չ միայն Իրանի ազգային անվտանգութեան համար, որը Հայաստանին բարեկամ երկիր է, այլեւ՝ Հայաստանի ազգային անվտանգութեան համար:*

*20-րդ դարում այդ միտումներն առնուազն երկու անգամ լրջագոյն խնդրի առջեւ են կանգնեցրել Իրանի պետութեանն ու ժողովրդին: Առաջինը 1918 թուականին էր, երբ Արաքս գետից հիւսիս ընկած պատմականօրէն Առան ու Շիրուան կոչուող տարածքների վրայ հիմնադրուեց Ադրբեջանի Հանրապետութիւնը: Անուան ընտրութիւնն ինքնին ակնյայտօրէն խօսում էր այն նպատակների մասին, որ հետապնդում էին այդ արհեստածին հանրապետութեան հիմնադիրները: Դա լուրջ խնդիր առաջացրեց Իրանի Ատրպատականում, որն, իհարկէ, պետական այրերի ու ժողովրդի զգօնութեան շնորհիւ լուծուեց: Երկրորդը 1945 թուականին էր, երբ Թաւրիզում հիմնադրուած Ատրպատականի դեմոկրատական կուսակցութիւնը, իր հիմնադրումից կարճ ժամանակ անց, յենուելով Խորհրդային Միութեան վրայ, հռչակեց Ադրբեջանի Ինքնավար Հանրապետութիւնը: Սա աւելի վտանգաւոր իրավիճակ ստեղծեց երկրում, որը կրկին պետական այրերի, ժողովրդի խելամտութեան եւ արտաքին ճնշումների շնորհիւ բարեյաջող աւարտ ունեցաւ:*

*Այդ միտումները, տարբեր առիթներով եւ ուժգնութեամբ, 20-21-րդ դարերում ունեցել են նաեւ այլ դրսեւորումներ:*

*Վերջին առնուազն երկու տասնամեակում թէ՛ Իրանում, թէ՛ արտասահմանում բազմաթիւ գրքեր, գիտական ուսումնասիրութիւններ, վերլուծութիւններուաշխատութիւններ են հրատարակուել այդ հարցերի վերաբերեալ: Կազմակերպւում են նաեւ գիտաժողովներ, խորհրդաժողովներ, սեմինարներ եւ այլն: Հրատարակութիւններն ու միջոցառումներն իրականացւում են պետական եւ ոչ պետական շրջանակների կողմից: Պետական շրջանակների ներգրաւուածութիւնն այդ հարցերում վկայում է այն կարեւորութեան մասին, որ Իրանի պետութիւնը տալիս է այդ խնդրին:*

*Այս ուսումնասիրութիւնը համեստ փորձ է՝ հայ հանրութեանը որոշ պատկերացում տալու Իրանում գոյութիւն ունեցող պանթիւրքական հոսանքների մասին:*

*Հետեւելով Իրանում եւ Իրանից դուրս տեղի ունեցող իրադարձութիւններին՝ ականատես ենք դառնում այդ ուղղութեամբ կատարուող որոշ գործընթացների:*

*Մի կողմից՝ ժամանակ առ ժամանակ իրենց մասին են յայտարարում ասպարէզ իջած նորանոր քաղաքական կազմակերպութիւններ, որոնց իսկութիւնը ստուգելը լուրջ աշխատանք է պահանջում: Այդ կազմակերպութիւնների գործունէութեան մասին տեղեկութիւն կարելի է ձեռք բերել իրենց կայքերից, որոնք գրանցուած են Իրանից դուրս, կամ ընկերային ցանցերում նրանց էջերից: Այդ կազմակերպութիւններն իրենց յայտարարութիւններով ու աշխատանքների մասին լրատուութեամբ որոշ մթնոլորտ են ստեղծում եւ թողնում են այն տպաւորութիւնը, թէ իրենք շատ են, իրենք ճնշուած են, իրենք կազմակերպական հսկայական ցանց ունեն եւ այլն:*

*Միւս կողմից՝ համալսարանական, ուսանողական, գիտական, մշակութային եւ այլ անունների տակ կազմակերպւում են համագումարներ ու խորհրդաժողովներ Իրանում եւ Իրանից դուրս, որոնք ակնյայտօրէն անջատողական նպատակներ են հետապնդում: Արծարծւում են Իրանը դաշնային (ֆեդերատիւ) մոդելով կառավարելու հարցը, Իրանի էթնիկ խմբերի անդամներին մայրենի լեզուով կրթուելու հնարաւորութիւնից զրկելու եւ նմանատիպ բազմաթիւ թեմաներ: Ուսանողական հրատարակութիւններում փառաբանւում է թուրք ազգը եւ այլն:*

*Նշեմ, որ այդ գրութիւններում, զեկոյցներում, ելոյթներում եւ այլն ուղղակի պանթիւրքական ձեւակերպումների դժուար է հանդիպել, սակայն բոլոր ծրագրերը, գաղափարներն ու մտքերը տանում են դէպի պանթիւրքական մտայնութիւն ու նպատակներ:*

*Եւ, ամենակարեւորը, եթէ որոշ ժամանակ առաջ պանթիւրքական աշխատանքները կատարւում էին Իրանից դուրս՝ համագումարների, հարցազրոյցների, հանդիպումների եւ այլ ձեւերով, այսօր այդ աշխատանքների մի մասը տարբեր ձեւերով ու անունների տակ կատարւում է Իրանում: Հետեւաբար պանթիւրքական հոսանքների գործունէութիւնը ուսումնասիրութեան ենթակայ է թէ՛ Իրանից դուրս եւ թէ՛ Իրանում:*

*Վերջում նշեմ, որ թէեւ աշխարհագրական, տնտեսական, քաղաքական, մշակութային, ռազմական և այլ պատճառներով ներկայում պանթիւրքիզմի իրականացումը անիրատեսական է դիտւում, սակայն երբեք ու երբեք չպէտք է մտածել, որ դա այլեւս անկենդան գաղափար է: Ինչպէս կը տեսնենք այս հետազօտութեան մէջ, այն ոչ միայն գոյութիւն ունի, այլեւ կան կենտրոններ, որոնց կողմից այդ գաղափարախօսութիւնը արդիականացւում եւ լայնօրէն տարածւում է: Իսկ նման հետեւողական աշխատանքի արդիւնքում պատեհ առիթի դէպքում այն մէկ անգամ եւս կարող է պատուհաս դառնալ թէ՛ հայութեան ու Հայաստանի համար եւ թէ՛ Իրանի: Այս գիրքը մի փորձ է՝ վերստին յիշեցնելու այդ վտանգի եւ այն կանխելու անհրաժեշտութեան մասին:* ■


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 13 Յունուար 2019-ին առաւօտեան ժամը 10:00-ին
Ս. Մինաս Եկեղեցւոյ Մէջ (Մարմինա)

**ՄԵՌԵԼՈՑԻ**

Սուրբ և Անմահ Պատարագ պիտի մատուցուի
Յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի ազգային բարերարներու և
եկեղեցւոյ Նուիրատուներու՝

**ԵՂԻԱԶԱՐ ԱՄԻՐԱՅ ԱԿՆՑԻԻ**
**ՏԻԳՐԱՆ ՓԱՇԱ Տ՛ԱՊՐՕԻ**
**ՕՀԱՆԻԿ ՊՕՏՈՒՐԵԱՆԻ**
**ԶԻՊԱ ՏԻՒԼԿԵՐԵԱՆԻ**
**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԷՏՄԷ ԱՄԻՐԱՅԵԱՆՆԵՐՈՒ**
**ԱՐԱՄ ԵՒ ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԱՖԵԱՆՆԵՐՈՒ**
**ՀՐԱՆԴ ՆԱՍԻՊԵԱՆԻ**
**ԷԼՄՈՆ ԽՈՍՐՈՎ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ**
**ՏԻԳՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ**
Նաև
**ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՅԵԱՆԻ**
և իր ընտանիքի բոլոր ննջեցեալներուն համար: Ինչպէս նաև
**ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ**
և իր ընտանիքի բոլոր ննջեցեալներուն համար

Հանրաշարժի սպասարկութեան ժամանակացոյց

| | |
|---|---|
| Իսմայլէյա Հրապարակէն | ժամը 8:00-ին |
| Այծեմնիկ Հանգստեան Տան առջեւէն | ժամը 8:10-ին |
| Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին առջեւէն | ժամը 9:00-ին |

Ե.Գ.Մ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ


## Թեհրանի Աւագանիի Ներկայացուցիչ. «Ալիք» Օրաթերթն Արձանագրել Իրանի Մշակութային Ժառանգութիւն




*Թեհրանի աւագանիի ներկայացուցիչ Հոճճաթ Նազարի «Ալիք» այցելած ու հանդիպած է թերթի պատասխանատուներուն եւ շնորհաւորած Ամանորի եւ Ս. Ծննդեան տօները:*

*Նազարիին ընկերակցած է «Թեհրանը սիրողներու միութեան» նախագահ Մահմուտ Նայիմի:*

*Հիւրերը դիմաւորած են թերթի տնօրէն Արա Շահնազարեան եւ օրաթերթի վարչութեան անդամ Նորայր Արամեան: Հիւրերը ծանօթացած են թերթի աշխատանքներուն եւ օրաթերթի պատմութեան:*

*Աւագանիի ներկայացուցիչը բարձր գնահատելովկատարուածաշխատանքները և իրականացուող առաքելութիւնը՝ առաջարկած է «Ալիք» օրաթերթն արձանագրել Իրանի մշակութային ու հոգեւոր ժառանգութեան ցանկին վրայ:*

*Մահմուտ Նայիմի նոյնպէս խօսելով «Ալիք»ի կարեւորութեան մասին, մանաւանդ իբրեւ Իրանի մամուլի պատմութեան չնչող էջերէն մին, յայտնած է, որ «Թեհրանը սիրողներու միութեան» «Թեհրանի թաքնուած գանձեր» նախագիծի յաջորդ նիստը նուիրուած պիտի ըլլայ «Ալիք» օրաթերթին՝ «“Ալիք”ը՝ իրանահայութեան հայելին» խորագրով:* ■

## Դոկտ. Ագապի Նասիպեան-Էքմէքճեան Ոչ Եւս Է



*Դեկտեմբերի 20-ին Կիպրոսի մէջ մահացած է դոկտ. Ագապի Նասիպեան-էքմէքճեան: Պատմաբան եւ գիրքերու հեղինակ դոկտ. Նասիպեան-էքմէքճեանը նախկին տնօրէնն էր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կիպրոսի Մելքոնեան կրթական հաստատութեան:*

*Դոկտ. Նասիպեան-էքմէքճեանի յուղարկաւորութիւնը կատարուած է կիրակի, 23 Դեկտեմբերին, Կիպրոսի մէջ:* ■

## Կարօ Փայլան...

**(Շար. Գ. էջէն)**

*դարանին մէջ իր լեզուով խօսիլ սկսի», լրատուամիջոցներու հետ զրոյցի մը ընթացքին յայտարարած է Թուրքիոյ մէջ «Հայկական անհիմն պնդումներու դէմ միաւորում» կազմակերպութեան նախագահ Կէօքսել Կիւլպէյ:*

*Ան մեղադրած է հայազգի պատգամաւորը խորհրդարանի ամպիոնը իր շահերուն համար օգտագործելուն, Թուրք ազգը ցեղասպանութեան մէջ մեղադրելուն համար:*

*Իսկ վերջին հայերէն նախադասութեամբ, ըստ Կիւլպէյի, Փայլան փորձած է «գաղտնի ուղերձ» մը յղել՝ ակնարկելով, որ պիտի շարունակէ շահարկել Հայոց ցեղասպանութեան հարցը խորհրդարանին մէջ:* ■

## 2017-ին ՀԲԸՄ-ը Ստացած Է 17 Միլիոն Տոլարի Նուիրատուութիւն




*Դեկտեմբեր 2018-ին լոյս տեսած ՀԲԸՄ-ի ամսագիրը կը տեղեկացնէ, որ նախորդ տարի՝ 2017-ին, բարեգործական կազմակերպութիւնը ստացած է շուրջ 17 միլիոն տոլարի նուիրատուութիւններ:*

*16,957,436 տոլար գումարը գոյացած է մեծ եւ փոքր նուիրատուութիւններէ: Մեծագոյն նուիրատուներն են՝ Ժագլին Շալճեանի կտակը՝ 3,220,033 տոլար, Վաչէ եւ Թամար Մանուկեաններ՝ 2,760,000 տոլար, Փաուլա Պալատուրի կտակը՝ մէկ միլիոն տոլար, Փօլ Մարսուպեան՝ 650,000 տոլար, Վահէ եւ Վերոնիքա Կարապետեաններ՝ 640,000 տոլար, Վուտրօ Մայքըլ Քէհիայեան՝ կէս միլիոն տոլար:* ■


ՄԱՐՏԻԿ ԵՒ ՌՈՒԲԷՆ
ԹԵՐՋԻՊԱՇԵԱՆ ԵՂԲՔ.



ԳՈՀԱՐԱՎԱՃԱՌ

ՈՍԿԻԻ ԳԻՆԸ
ԵԳ. ԹՂԹ.

| | |
|---|---|
| ՈՍԿԵԴՐԱՄ | 5176 |
| 21 ԿԻՐԱՏ | 647.05 |
| 18 ԿԻՐԱՏ | 554.61 |

Հեռ. 23901151